



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 14 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2020

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս եմ. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 125

ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՊԱՇՏՊԱՆՔ ԻՐԵՆՆԵՐԸ

Տիրոջ ապաւինողը Սիոն լեռան պէս
անասան է, եւ յաւետ անշարժելի:
Ինչպէս Երուսաղէմը շրջապատուած է լեռներով,
այնպէս Տէրը պարիսպի պէս իր ժողովուրդը կը շրջապատէ
այժմէն մինչեւ յաւիտեան:
Անիկա թոյլ պիտի չտայ որ ամբարիշտները շարունակ իշխեն
արդարներուն վիճակուած երկրին վրայ,
որպէսզի արդարները չփորձուին
իրենք եւս անիրաւութիւն գործելու:
Տէրը բարիք կ'ընէ բարիներուն
եւ սրտով ուղիղներուն.
Իսկ անոնք որոնք անհաւատարմութեամբ կը մոլորին,
Տէրը զանոնք պիտի արտաքսէ
անօրէնութիւն գործողներուն հետ միասին:
Խաղաղութիւն Աստուծոյ ժողովուրդին:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատուր Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն էս նեղէլոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ ին հոգիանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԹԸ



ԴԱՆԻԷԼԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆ

1:1-21

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ ՆԱԲՈՒԳՈՂՈՆՈՍՈՐԻ ՊԱՍՏԻՆ ՄԵՋ

Այնպես ինչպես միւս մարգարէութեանց պարագային, այսպէղ եւս թուականով կը սկսի ցոյց տալու պարմական իրողութիւն մը: Պարմական իրողութիւն մը, որովհետեւ ինչպէս ըսուեցաւ, որ յարուկ կացութեան մը կամ պարագայի մը առիթով է, որ Աստուած Իր յայտնութիւնը կու տայ մարգարէին, որպէսզի մարգարէն ըստ այնմ երթայ եւ ժողովուրդին փոխանցէ: Ահա շար ժամանակ չանցած, Յուդայի թագաւորին Յովակիմին թագաւորութեան երրորդ տարին Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը Երուսաղէմ եկաւ ու զանիկա պաշարեց: Երբ կը կարդանք Բ. Մնացորդաց գիրքը 36:5-8, այնպէղ կը նշուի թէ Յովակիմ թագաւորը Տէր Աստուծոյն առջեւ չարութիւն ըրաւ: Ահա այդ իսկ պարճառով. **«Տէրը անոր ձեռքը տուաւ Յուդայի Յովակիմ թագաւորը ու Աստուծոյ տանը անօթներուն մէկ մասը»**: Այս նախադասութիւնը կու գայ վկայելու Տիրոջ միջամտութիւնը, եւ թէ ամէն ինչ Անոր փնտրութեամբ է որ կը կատարուի: Միւս կողմէ, որպէս ազդարարութիւն, Տէրը այս երեւոյթը կ'օգտագործէ, ըստ այնմ մի գուցէ անդրադառնալու առիթ մը ըլլայ թագաւորին:

Այս հատուածը նաեւ ցոյց կու տայ, ինչպէս ամբողջ պարմութիւնը, Աստուծոյ ամենագորութիւնը. **«Տէրը անոր ձեռքը տուաւ»** (2 հմր): **«Աստուած ներքինապէտին առջեւ շնորհք ու գլխութիւն գտնել տուաւ Դանիէլին»** (9 հմր): **«Աստուած այս չորս տղաքներու՝ ամէն դպրութեան ու իմաստութեան մէջ գիտութիւն ու հանճար տուաւ»** (17 հմր):

Տակաւին, այս պարմութիւնը կու գայ մեզի տրվեցնելու, թէ ինչպէս կարելի է ապրիլ մեր քրիստոնէական հաւաքը այսօրուան աշխարհին մէջ, այնպէս ինչպէս Դանիէլ կրցաւ ապրիլ օտար երկրին մէջ: Աշխարհ մը, որ բոլորովին խորթ ու օտար կը թուի իրեն համար քրիստոնէական հաւաքալիւններն ու սկզբունքները:

Այս պարմութիւնը մեզի կը ներկայացնէ վիճակ մը, կացութիւն մը, երբ ամբողջ ժողովուրդ մը կ'ապրէր խաղաղ պայմաններու տակ, եւ յանկարծ օր մը օտար պետութիւն մը կը յարձակի եւ ժողովուրդը ամբողջ իր թագաւորովը միասին գերի կը տարուի, եւ այնպիսի տեղ մը որ բոլորովին օտար միջավայր, օտար հաւաքալիւններ: Ի՞նչպէս կարելի է հաշտուիլ այս կացութեան հետ, եւ ի՞նչ կեցուածք որդեգրել, եւ ի՞նչպէս տեսնել այս բոլորի մէջ Աստուծոյ տեղը եւ դերը:

Այս կացութեան մէջ շարերը.

1. Շուրջով պիտի ընտելանային միջավայրին ու տարուէին: Երեկ Երուսաղէմ կ'ապրէինք, այսօր՝ Բաբելոն:
2. Յուսալքուած, պիտի չկարենային ընտելանալ այդ միջավայրին, որուն արտայայտութիւն կը գտնենք 137 Սաղմոսին մէջ, ու պիտի յանձնուէին:
3. Դանիէլի եւ իր ընկերներուն նմանները, համագործկացելով հանդերձ, սակայն երբեք տեղի չտալով այն սկզբունքները, որոնք կու գան ցոյց տալու, թէ ովքեր են իրենք, եւ որո՞ւ կը պարկանին: Այսինքն, պիտի կարենային **այո** ըսել, այն տեղերու մէջ, ուր պէտք է **այո** ըսել, եւ **ոչ** ըսել, այն տեղերուն մէջ, որ **ոչ** է: Օրինակ. անոնց պիտի փրկուէր նոր անուն, նոր ուսում, նոր լեզու տորվիլ, պիտի չմերժէին: Բայց, երբ հարցը կը վերաբերի ուրեւիքի՝ պիտի մերժէին ուրեւի:

Այս բոլորը պիտի կարենային ընել, որովհետեւ Աստուծոյ առաջնորդութեան ու Անոր հովանիին տակ կ'ապրէին Դանիէլն ու իր ընկերները, եւ ունէին իմաստութիւնը այոն եւ ոչը ըսելու: Այդ իմաստութիւնը ուրիշ բան չէր եթէ ոչ Աստուծոյ երկիւղը: Առակաց գիրքը կ'ըսէ. «Իմաստութեան սկիզբը Տիրոջ երկիւղն է» (1:7):

Արդեօք ուրեւիքին մէջ ի՞նչն էր անպարտելիութիւնը: Ընդհակառակը, թագաւորական ազնիւ ուրեւիք էր հրամցուածը, բայց որովհետեւ Դանիէլ այնպէս դաստիարակուած էր, որ արտաքին նշանները ներքին համոզումներ էին ինքզինք ճանչնալու, թէ ո՞վ է եւ ի՞նչ է ինք, եւ թէ Աստուած ի՞նչ կ'ակնկալէ իրմէ:

Եւ ահա անոնց հաւաքարմութեան արդիւնքը տասը օրեր յետոյ պիտի յայտնուէր, երբ անոնց դէմքը շար աւելի աղէկ էր քան անոնցը, որոնք կերան թագաւորին ուրեւիքէն: Եւ ահա **«Տէր Աստուած այս չորս տղաներուն ամէն դպրութեան ու իմաստութեան մէջ գիտութիւն ու հանճար տուաւ»**: